



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3120

ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ

# ՊԵՏՏՐՈՍ

## ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Արտապուրին 1902 թ. «Արարատ» Յունակ և Փետրոս համարելեց.

Հ Օ Ա. Ա Ռ Ա. Խ Ա. Խ  
Տ. Տ. Մ Ե Ր Տ Տ Բ Ա.

Վեհափառ և Մբագնագոյն Կարուղիկասի

Ա Մ Ե Յ Ա Յ Ա Յ Ա Յ

Վ. Ա. Գ. Ա. Բ Շ Ա. Պ Ա. Տ

Տպարան Մայր Արքուոյ Մբայ Էջմիածնի

1902

17 SEP 2009

208.2

5-46 Ա. Կ.

ԳԱԼՈՒՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ



# ՊԵՏՐՈՎ

## ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ

15741

Արտապուրիմ 1902 թ. «Արարատ» Յունուար և Փետրուար համարներից.

Հ Յ Ա Մ Ա Ն Ա Կ  
Տ. Տ. Մ Կ Բ Տ Զ Բ Ա .


Վեհափառ և Արքազնագոյն Կարուղիկոսի

Ա Մ Խ Ա Յ Ա Հ Ա Յ Ա Գ

Վ. Ա. Դ. Ա. Ռ Շ Ա. Պ Ա. Տ  
Տպարան Մայր Աբովյան Արբոյ Էջմիածնի  
1902

ՄԱԿԱՐԴԱ  
ԱՐԹՈՒՐԻ ՅՈՒՆԵՐԴՈՒ

Дозволено Цензурою 25 Февраля 1902 г. г. Тифлис.



1002  
8269

## ՊԵՏՐՈՍ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1. Պետրոսն եպիսկոպոսութիւն արաւ տասը տարի  
547—556 թուերին (տես Սիսակ. 20): Պետրոսի մասին  
մեր ունեցած գլուխոր աղբեկը է Օրբելեան Ստ. եպիս-  
կոպոսը: Պետրոսին ժամանակակից աղբեկից ունինք  
տեղեկութիւն, որ նա՝ յամենայն գէպո՛ Սիւնեաց եպիս-  
կոպոս էր Պարսից Խոսրովի արքայից արքայի քսան և չոր-  
սերորդ տարին, այն է փրկչական 554 թուին: Նա կեն-  
դանի էր նաև՝ Խոսրովի քսան և հինգերորդ տարին, այն  
է 555—6 թուին և Ներսէս Բ.-ի նեստորականաց գէմ  
արած ժողովներին մասնակցում էր: (Տես Գիրք Թղթոց,  
Թիֆլիս, 1901. էջ 70—79, մասնաւորապէս էջ 72 և 76,  
նաև «Արարատ» 1901. էջ 470, իմ «Գրիգոր Մանաճիճը  
Ռաժիկը»): Յովհաննէս կաթողիկոսի թղթում, գրուած  
Սիւնեաց Վրթանէս եպիսկոպոսին, Պետրոսն արդէն «Երա-  
նելի» է, այսինքն վախճանուած (Գիրք Թղթ. էջ 79):  
Պետրոսի գրուածքներից մեր ձեռքն հասել են միայն  
պատառիկներ: Նրա պատմական գրուածքի մասին յիշա-  
տակութիւն է անում Օրբելեան և բերում է քաղուածք-  
ներ: Պետրոս Սիւնեցուց քաղուածքներ կան և Աղուանից  
Պատմութեան մէջ (Զարք. Հին Դպ. 1897, 409—413):  
Այս բոլորն արդէն տպագրութեամբ յայտնի են: Ներքե-  
ւում մենք հրատարակում ենք Պետրոսի մնացած անտիպ  
գրուածքները, այն չափով որ ես ունիմ ձեռքիս տակ մեր  
մատենագրանի ձեռագրերից: Խրազանչիւր գրութեան  
գլուխն նշանակում եմ այն ձեռագրիր կամ ձեռագրերը,

որոնցից կատարում եմ հրատարակութիւնս, համառօտ-  
տեղեկութիւններով ձեռադրերի մասին։

2. Առաջին տեղը տալիս ենք Պետրոսի Աստուածած-  
նայ Գովեստին, որ կարդացում էր Փրկչի Ծննդեան տօ-  
ներին։ Վեցերորդ դարում ինչպէս և գեռ շատ յետոյ  
մեր Եկեղեցին չունէր և ոչ մի յատուկ տօն Աստուածած-  
նայ։ Աւետեաց, Վերափխման, Գիւտ տփոյ ևն։ տօները  
մտել են մեր մէջ շատ յետոյ՝ օտար անվաւերական գրու-  
թիւնների թարգմանութեանց աղդեցութեամբ, յոյն և  
աւելի ուշ նաև լատին՝ Եկեղեցիների օրինակով և հետևու-  
թեամբ։ Այս ներբողեանի հնագոյն և լաւագոյն օրինակն  
է Յ, գրուած փրկչ. 1201 թուին։ Զ-երը բաժանուում են  
երկու խմբի. առաջին խումբը ՀԻ պահել է անաղարտ  
հին գրութիւնը, մինչդեռ Երկրորդ խումբը՝ ԿՈ անում է  
կամայական փոփոխութիւններ, կրծատումներ, յաւելում-  
ներ ևն։ Երկրորդ խմբից շատ քիչ բան է առնուած հրա-  
տարակութեանս մէջ։ Նշանակում ենք Սուլր. Պրեից վկա-  
յութիւնները և ուրիշ աղբիւրներ, օրինակ Պատարագա-  
մատոյց ևն., ամեն անգամ երբ այդ նկատել ենք։

3. Երկրորդ տեղը դնում ենք Ազուանից Վաշագան  
իշխանի կամ թագաւորի (=արքայ) Հարցումները և Պետ-  
րոսի Պատասխանները, թուով 24։ Պէտք է ուշադրութեան  
առնել որ Պետրոսին ժամանակակից Արքահամ Մամիկո-  
նէից եպիսկոպոսն էլ գրուածքներ ունի նոյն Վաշագանի  
խնդրանքով։ Պետրոս Սիւնեցու հետ Եկեղեց. ժողովնե-  
րում և թղթերում յիշուում է Մերշապուհ Տարօնի և Մա-  
միկոնէից եպիսկոպոսը՝ որին յաջորդել է Մամիկոնէից  
Արքահամ եպիսկոպոսը (Պիրք Թղթ. էջ 73, 76, 78)։  
Զարբ.-ը կատած է յարուցանում այս գրուածքի վաւե-  
րականութեան մասին՝ «Եթէ յիրաւի Պետրոսի Երկասի-  
րութիւնը սեպենք՝ օտարի ձեռք խառնուած կերևնայ,  
որոնք իրեն լուսաւորեալ մտացը հարազատ ճնունդը չեն  
կրնար ըլլալ, որ թէ գրութեան կերպէն և թէ ոճէն կը  
յայտնուի» (Հին Դպ. 410)։ Այս ընդհանուր խօսքերը հա-  
զիւ թէ որ և է ապացոյցի զօրութիւն ունենան։ Թէ Պետ-

րոս Սիւնեցին ինչպէս և իւր ժամանակակից կաթողիկոսը  
հակաքաղկեդոնեաններ էին և հակառակ երկաբնակու-  
թեան, — և այս է մեր Հարցումների նիւթը, — այդ ան-  
կասկած է։ Յակոբիկների յիշատակութիւնը (Հարց. ԺԱ)՝  
վեցերորդ դարի կիսում անտեղի չէ, թէև կանուլս յիշ-  
ատակութիւններից մէկը։ «Երկու կամքի» յիշատակու-  
թիւնը (Հարց. ԺԲ, ԺԹ) չէ իբրև երկաբնակների կողմից  
ընդունուած վարդապետութեան յիշատակութիւն, այլ  
իբրև անհնարաւորութիւն, իբրև մի բան, որ նոյն իսկ եր-  
կու ընութիւն ընդունողը չը պէտք է ընդունէ, ուրեմն  
այս կէտն էլ չունի որ և է անտեղութիւն վեցերորդ դարի  
կիսի համար։ Թողնելով մի կողմ աւելի մանրամասնու-  
թեանց իջնելը՝ դառնանք այս գրուածքի աղբիւներին,  
որչափ որ մեզ յաջողուել է գտնել և որոշել այդ աղբիւր-  
ները։ Պրուածքս ծայրէ ծայրէ ներշնչուած է Արիստոտէլ-  
եան փիլիսոփայութեամբ, մասնաւորապէս Դաւիթ Ան-  
յաղթի անուամբ մեղ հասած գրուածքներով։ Դաւիթի  
Սահմանաց գիրքը, Հինգ Առածները (Հարց. Ա, Թ), բայց  
մասնաւորապէս Պորփիրի Վերլուծութիւնը (Հարց. ԺԲ, Ի,  
ԻԱ) ծանօթ են այս գրուածքի հեղինակին։ Բաւականա-  
նանք այստեղ միայն մի օրինակով, միւս նման կէտերը  
տեսնել ծանօթութեանց մէջ։

Վերլուծ. Պորփիրի  
Վենես. 1833, էջ 322.

«Զորք են որ ներանիւթ են ...  
խոստովաննեալ ի խոստովաննե-  
[ = պկին=պկին=չորեքին ] են,  
լոյ, Երկրայ յերկրայէ, խոստո-  
[ Երկրայ ի խոստովաննելոյ ] \* և  
վաննեալ յերկրայէ, Երկրայ ի խոս-  
տովաննելոյ ]  
Երկրայ յերկրայէ, խոստովաննեալ  
յերկրայէ, խոստովաննեալ ի խոս-  
տովաննելոյ »

Ուրեմն Դաւիթ Անյաղթի անուամբ մեղ հասած գր-  
րութիւնները — հայ թարգմանութեամբ — անպայման կա-  
նուլս են Վաշագանի Հարցումներից։ Եթէ այս Հարցոււ-

\* Փակագծուածք մեր Զ-րի գրչի բաց բոլածն է։

Ները Պետրոս Սիւնեցու վաւերական գրութիւնը լինին, Անյաղթի դործերի հայ թարգմանութիւնը պէտք է բարձրացնել մինչև վեցերորդ դարի առաջին կէսը։ Դաւիթ Հարքացու ինդրով երկար զբաղուած լինելով՝ Պետրոսի այս վաւերական կամ անվաւեր գրուածքը մեղ հետաքրքեց և այս հետաքրքրութեան հետեւանքն է Պետ. Սիւնեցու մնացորդների հրատարակութիւնը։ Դաւիթ Հարքացուն մենք վերադառնալու ենք, ուստի այս մասին առայժմս այսչափ։

4. Աւելի ժամրակիու են Հարցմանց ժամանակը որուշելու համար Կիւրեղ Աղեքսանդրացու Պարապմանց և Գրիգոր Նիւսացու Կազմութեան (=Տեսութիւն Մարգոյն Կազմութեան) և Բնութեան (=Նեմեսիոսի Յաղագս Բնութեան մարգոյ) գրքերից փոխառութիւնները։ Այդ երեք գրքերն էլ Ստեփանոս Սիւնեցու և Դաւիթ Հիւպատի թարգմանութիւններն են։ Պարապմանց գերքը թարգմանուել է 714 Փրկչ. թուին, Նիւսացու Բնութեանը (=Նեմեսիոս) 716-ին կամ 717-ին, բուն Նիւսացին (=Տեսութիւն Մարգոյն Կազմութեան) առանց յիշատակարանի, բայց կարծւում է սովորաբար թարգմանուած նոյն թարգմանիչներից ութերորդ դարի սկզբին (տես Հայկ. Բառ. Յառաջ., Զարք. թարգ. Նախն. էջ 371., Տաշ. Մանր Ուսում. 4—13), թէև կարօտ յատուկ ուսումնասիրութեան։ Նոյն թարգմանիչներինն է և Դիոնիսիոս Սրբապատացին, Փրկչ. 712-ին (Փիլիպպոսի Երկրորդ տարին, տես Թարգ. Նախն. էջ 388): Այսպիսով Ստեփ. Սիւնեցու և Դաւիթ Հիւպատի թարգմանութեանց մեղ հասած թուականներն են 712—717։

Վաչագանի Հարցումները Կիւրեղ Աղեքսանդրացուց վկայութիւն են բերում Ա. և Ժ. Հերում։ «Կիւրեղ Աղեքսանդրացի համառաւտ բանիւ սահմանեաց զհողին սուրբ Ընդդէմ ամբարշտին Մակեդոնիկ» [Ա]—«Եւ զայս կիւրեղ Աշղեկանդրացի ուսուցանէ. ի Պարապմանցն ասէ՝ Քրիստոսդանուն ոչ սահման է և ոչ սահմանի զաւրութիւն» [Ժ.]։ Այս հատուածը Ստեփ. Սիւնեցու թարգմանութեամբ հե-

տեեալն է. «Քրիստոսակ անուն ոչ սահմանի զօրութիւն ունի և ոչ զուրուք զէութիւն»։ Դիրք Պարապմանց Ա. Ինչպէս տեսնում ենք կայ նմանութիւն, բայց ոչ բառացի նոյնութիւն։ Ենթադրել թէ մեր նախնիք միայն Ստեփ. Սիւնեցու թարգմանութեամբ ծանօթացան Պարապմանց գրքին մեղ անհեթեթութիւն է թւում։ Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսը յունագէտ էր, «իմաստասէր», «քերթող» և հարկաւ օգտում էր Կիւրզի յոյն բնագրից։ Ոչ յունագէտ հայերն էլ ծանօթ էին Ստ. Սիւնեցուց առաջ Կիւրզի ճառերից և կրօնական վիճական գրուածքներից քաղուածներից։ Յատկապէս Կիւրզի Պարապմանց գրքից քաղուածքներ ենք գտնում Տիմոթէոս Կուղի Երկասիրութեան հայ թարգմանութեան մէջ (Զ. № 1988, Երկաթագիր, մագաղաթ, մասնաւորապէս էջ 101<sup>ա</sup> «Նորին ի Պարապմանցն»)։ Տիմոթէոսի հայ թարգմանութիւնը Ստ. Սիւնեցուց շատ առաջ էր և գործ է ածւում արգէն Հայոց և Վրաց եկեղեց։ Վէճերի ժամանակ, (տես Գիրք Թղթ. էջ 126, 140, նաև 101, 103 ևն.)։ Ժէ Հարցման մէջ կարծես թէ ակնարկութիւն է լինում Նիւսացու գրքերին՝ «Եւ վասն մարգոյն ուսուիր ի մարգոյն կազմութեան և բնութեան, զի առանասունս հաղորդին և առ հրեշտակս նոյնպէս»։

Շատ աւելի կասկածելի են Բ. Հարցման մի Երկու ասացուածները, որ գրեթէ նոյնութեամբ առնուած են Նիւսացուց։

«Զի քուն է ախտ անդողոջ անաղանալ ի մարմնի զգայութողոջ խաղաղացեալ ի մարմնի թեանցն»։ Հարց. Վաչագանի, Բ. «Եւ այսպիսի ախտ քուն է. անաղաղանալ ի մարմնի զգայութողոջ խաղաղացեալ ի մարմնի թեանցն»։ Նիւս. Բն. (=Նեմեսիոս), Զ. 456, էջ 144 ա, տ. և Հայկ. Բառ. «անդողոջ»։

«Եւ բարկութիւն եռանդն է զուրջ զսրտիւն արեանն ի վերածիութենէ մաղձոյ»։ Հարց. Վաչ. Ը. «Եւ այսպիսի արեանն ի վերածիութենէ մաղձոյ կամ ի պղտորմանէ եղեալ»։ Նիւս. Բն. (=Նեմեսիոս), Զ. 456, էջ 70 բ, տ. և ՀԲ. «վերածիութիւն»։

Այս երկու օրինակն՝ իմ կարծիքով՝ բոլորովին բաւաշան է խախտելու համար Վաչագանի Հարցմանց վաւերաշանութիւնը։ Ուրեմն և ստիպուած ենք համոզուել, որ Վաչագանի Հարցումները նեմեսիոսի թարգմանութիւնից, այն է 716 կամ 717 թուից, յետոյ են դրուած, բայց՝ յաշմենայն դէպս 981 թուականից առաջ, որովհետեւ այդ թուականիցն է № 102 ձեռագիրը, մեր միակ օրինակը, որից անում եմ այս հրատարակութիւնը։

Հարցմանց միւս աղբիւրները՝ Ապողինար, Պրոկլ, Դրիգոր Աստուածաբան ևն., իբրև հնագոյն թարգմանութիւններ, որոնցից կարող էին օգտուել և Պետրոս Սիւնեցին և կեղծ-Պետրոսը, գրութեանս ժամանակը և վաւերականութիւնը որոշելու համար նշանակութիւն չունին։ Նոյնը պէտք է ասել և աւելի նորագոյն գրողների համար, որոնք նոյն իսկ մեր ձեռագիրից աւելի ուշ օգտուում են և քաղում Վաչագանի Հարցումներից, ինչպէս օրինակ Վանականը (Հ. Թ.) և Վահրամը (Հ. Բ.).

5. Այսու ամենայնիւ Վաչագանի Հարցումները պահում են իրենց նշանակութիւնը իբրև անվաւերագիր, ամենայն հաւանականութեամբ ծագած հայ և աղուան կրօնական վէճերի ժամանակ, 8—10-րդ դարում, առանձնայատուկ ոճով և բառերով («միատակ»\*, «կոսն» ևն.) և իբրև մեղ ծանօթ հնագոյն գրութիւններից մէկը, ամբողջ շովին տողորուած «Դաւիթ Անյաղթով»։ Դաւիթ Անյաղթի հնագոյն յիշատակութիւնը յականէ յանուանէ՝ Մադիստրոսինն է և Ստ. Ասողիկինը։ Կոնիքիրի ընդարձակ ուսումնասիրութեան մէջ (Anecdota Oxoniensia, Clas. Ser. I, part VI. A collation with the ancient arm. Version of the Greek text of Aristotle's Categories, by Fr. Corn. Conybeare. Oxford, 1892. Տաշեանի հայ. թարգմանութիւնը «Ամս. Հանդէս» 1893) Ստ. Սիւնեցուց, ութերորդ դարից, բերուած վկայութիւնը, որի մէջ իբր թէ «բացորոշ յիշատակութիւն մը կայ Դաւիթ Սահմանաց» («Հանդէս

\* Հմմալ. ժողովրդական մէտական այս ական է առաքար երկանական է:

Ամս.» 1893, էջ 51) լոկ թիւրիմացութեան արդիւնք է։ Այդ վկայութիւնը Կոնիքիրն առնում է Զարբ.-ի Հին Դպրութիւնից (1886, էջ 301) իբրև Ստ. Սիւնեցու (ութերորդ դար) մի հատուած, որն ինձ մեծ նեղութիւն պատճառեց։ Ինչ որ յայտնի է Ստ. Սիւնեցուց և մեղ հասել է Զ-երում բոլորը թերթելով ինձ չյաջողուեց գըտնել այդ հատուածը և վերջապէս կասկածելով որ այդ տողերը կարող են լինել Օրբելեանինը, որ նոյնպէս Ստեփանոս է կոչում և Սիւնեցի, և վենետիկեան յատուկ սուվորութեամբ առանց աղբիւրի ցուցման կամ ճիշդ ցուցման մէջ են բերուած, դիմեցի Օրբելեանին։ Եւ յիրաւի Օրբելեանն ունի այդ հատուածը տառացի։

Կոնիքիր, Տաշեանի բարգմանութեամբ, «Հանդ. Ամս.»  
1893, էջ 51.

Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց նախագահ Արիի եպիսկոպոսի՝ Հականառութիւն Ընդդեմ Երկարակաց։ Շարադրեալ ի բուին Հայոց ԶԾԱ., ի կարողիկոսութեան Գրիգորի Անաւարգեցւոյ։ Տպագ. էջ 20.

«Այս միւնայն հեղինակնեն [=Ստ. Սիւնեցի, ութերորդ դար] քով բացորոշ յիշատակութիւն մը կայ Դաւիթ Սահմանաց։ Այս տեղն է այսպէս։ «Արդ թէ զինչ է բնութիւնս մեր է բնութիւնս մեր, յատկապէս յատկապէս ուսաք ի Դաւիթայ եռաւմեծէ. այն որ ընդդէմ ական՝ որ ընդդէմ Ակադեմացն և Պիւռհոնացեացն դիմեանցն և պիհուոնացեացն դիմակայէ քաջապէս. որք ջանային եղծանել զգոյութիւն իմաստութեանն»։

«Արդ թէ զինչ է բնութիւնս մեր յատկապէս ուսաք ի Դաւիթայ եռաւմեծէ. այն որ ընդդէմ ական՝ որ ընդդէմ Ակադեմացն և պիհուոնացեացն դիմակայէ քաջապէս. որք ջանային եղծանել զգոյութիւն իմաստութեանն»։

(Այս տպագիրը չունի թուական, տես այս մասին Զարբ. Հայկ. Մատենագիտութիւն, 1883, էջ 634):

Հետեւութիւնը բացատրութեան կարօտ չէ։

6. Պետրոս Սիւնեցու երրորդ և չորրորդ դրութիւններից ունիմ միայն հատուածներ։ Առաջինը Յաղագս Հաւատոյ վերտառութեամբ, որ երեք տիեզերական ժողով-

ների, և Եփեսոսի Երկրորդ ու Քաղկեդոնի ժողովների համառօտ պատմութիւնն է։ Այստեղ փոքր ինչ կասկածի տեղիք է տալիս այն, որ Պետրոսը Սահակ Պարթևին կենացնի է համարում Դէռակարոսի նախագահութեամբ Եփեսոսում եղած ժողովի և Քաղկեդոնի ժողովի ժամանակ։ Սահակ Պարթևի յիշատակութիւնը այս դէպքում թերեւս մեկնուի այն իրողութեամբ, որ Սահակի մահից յետոյ մինչև Քաղկեդոնի ժողովը Հայաստանում չկար օրինաւոր կաթողիկոս, չհաշուելով ասորի նշանակովի պաշտօնեաները, և հայրապետական գահը կառավարում էր տեղականերով։ Իսկ սովորութեամբ, ինչպէս որ է նաև մեր օրերում, Հայրապետական գահի թափուր ժամանակ, օրինակ պատարագին, յիշատակում է հանդուցեալ կաթողիկոսը, մինչև նորի ընտրուիլը։

Պետրոսի չորրորդ գրութիւնը Ծննդեան ձառ է, որեց ունիմ վեց փոքրիկ հատուածիկներ, որոնցից առաջին չորսը տասներորդ դարի ձեռագրից և ութերորդ դարի մի ժողովածուից, որ պատկանում է Ստեփանոս Խմաստասիրի [ամենայն հաւանականութեամբ Սիւնեցին] դրչին։ Այդ Ստ. Խմաստասիրի մասին առաջին պատեհ առթիւ։

Գալուստ Տէր-Մկրտչեան

Յունուար 1902.



## I.

G=Գէորգ զբէ ճառընտելը № 943 (=Կարին. 923), թուղթ, երկաթագեր, գրուած Հայոց ՈՆ=1201 Փրկչ. թուականին, Զաքարէ Ամերսպասաւարե ժամանակ։  
H=Հրաշափառ Տօնական, № 940, 7, բոլորգեր, թուղթ, գրուած վերին Նորավանքում Մատթէոս քահանայի ձեռքով Հայոց ԶԵ թուին=1456 Փրկչ։  
K=Ճառընտ. № 935, թուղթ, բոլորգեր, գրեւ Գրեգոր աբեղայ, Հայոց ՊԵ թուին [853+551=1404 Փրկչ.]:  
W=Ճառընտ. № 938, թուղթ, բոլորգեր, Հայոց ՊԵ [+ 551=1402 Փրկ.] թուին, գրեւ Աւետիք սարկաւոդ։  
[H էջ 58<sup>ա</sup>—59<sup>բ</sup>, G 72<sup>բ</sup>—75<sup>բ</sup>, K 346<sup>բ</sup>—348<sup>բ</sup>, W 58<sup>ա</sup>—61<sup>ա</sup>]

## ԵՐԱՆԵԼԻՄՑՆ ՊԵՏՐՈՍԻ ՍԻՒՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԳՈՎԵՍՏ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՒՆ ԵՒ Ի ՄԻՇՏ ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ ՀԱՅ ՅՈՐՁՈՐՁՄԱՆ ՆՈՐԻՆ. ԵՒ Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ԼՈՒԾՄՈՒՆՔ ՆՈՅԻՆ, ՀՈԳԵԿՈՐ ԻՄԱՍՏԻՒՔ։

5 Բաղմութիւնք քրիստոսասէր ժողովոյս արարէք զաւրս զայս առան նորապանչ ուրախութեամբ և բերկրեցուը ի սմա մեծահրաշ ցնծութեամբ։ Զի ահա երկինք ձայն ա-

Տող 1 G Երանելոյն 1—4 K վերնագիրն և Երանելոյն Պետրոսի Սիւնեաց եպսի Ասացեալ գովեստ յամենասուրը ածածին կոյսն Մարիամ և ի համեմատութիւն անւան նորա։ W Երանելոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի Ասացեալ ի գովեստ սուրբ Աստուածածնին Մարիամու։ Բաց է բողնում ձառի սկզբից մի մեծ հատուած եւ սկսում է։ Մի՛ ոք իշխնեցէ զծնիցեալն ի սրբոյ կուսէն ասել սոսկ մարդ։ Կ եւ W ճառընտրեներից նշանակում ենի միայն մի յանի ընթեցուած, սկզբաւորուիրնեները եւ վերջերը, ցոյց աշու համար այդ խմբի նորագյն եւ մեծապէս տարեկ ու անհարազաւ խմբացրուիրն յինելը։ Տես եւ Տաշ. ցոյց. այն ձառը. կը 2 եւ 48։ Հմել, եւ Յայսմառուր Բ. ապ. 7 ապրիլ. մի շարք «Ուրախ լեր», այրքենական կարգով։ W-ի տեսակից և և Գեորգ. Ցուց-ի № 127 2-ը, որն ունի Պետրոսի այս ձառը «Մի՛ ոի իշխնեցէ զծնիցեալն սկսուածով։ Որիան տեղեկանում ենի Ցուցակից՝ այդ 2-ը մի ձառըներ է, բոլորգիր, բուղը, գրուած Աստուածառու կարողիկոսի ժամանակի գրիլ Կարապէ։ Բուն 2-ը ձեռի տակ յենի ունեցել։ Տող 3 H լուծարունք նորին 6 G ուրախութեան G բերկրեցայք Կ բերկրեցարուք

ւետաւոր առ երկիրս դոչեն և զծագումն փառաց ի  
թեղեեմ քարոզեն։ Յանկալի է մեզ այսաւը ջրհօրն  
Դաւթի, յորում գետն Աստուծոյ յորդահոս իշխեք բըղ-  
խեալ՝ զտիեղերս արբուցանէ։ Արդարե ասեմ թէ յառա-  
ջացոյց աւրինակն զծմարտութիւնն տպաւորեաց, քանզի  
տեառնամայրն ջրհօր ինքնարբուղս կենդանի ջրոյն եղեւ,  
ուստի ոչ իշխեաց ըմպել որ զնայն պահէր, զի կուսականն  
մարմին անազու սրբութեամբ ինքեցաւ, յորմէ արդարու-  
թեան արեգախն ծագեաց և ճառադայթաւէտ յուսով զաշ-  
խարհս լուսաւորեաց։

Արդ՝ զի՞նչ ասացից կամ զի՞նչ խաւաեցայց, զի միոր  
և լեզու զարժանաւոր պատիւ կուսական տաւնիս ընծա-  
յել ոչ կարեն։ Զի ոչքան զմարդասիրութիւնն Աստուծոյ  
չափել կարէ և ոչ թիւ զրազմամեծար յարդանս Մարիա-  
մու ի համար բերել զաւրէ։ Բարէ, ո՞ այլ այսպիսի լուաւ  
պանչելիս, եթէ տերն և սաեղծիչն ի յաղախնոյ և ի կա-  
ւեղէն ստեղծուածոյ տղայաբար յանձն էառ ծնանիլ այս,  
այս, քանզի կամելով զնախահայրն և զառաջին կոյսն  
կանդնել ի զլորմանէն՝ իսկապէս ծրաբեցաւ յորովայնին,  
Ճշմարտապէս եզւ այսուբածին մանուկ։ Յաղազս որոյ և  
մեք ի վեր քան զրան զաւրս պատուեցուք, և բարձր  
քան զերկինս զերկիրս իմասցուք և հրաշափառ քան  
զարեկելս զիօյսն անացուք, և առաւել քան զիրեշակս՝  
զհովիւսն մեծարեսցուք, և ընտիր քան զչերովիմն  
զմուրըն ծանիցուք։ Նաև Երուսաղէմ քաջ ի բաց քան  
զիրեղէն կոռան պայծառացաւ։

Եւ դայս ոչ եթէ մտածաւրէն ինչ Ճարտասանս խաւ-

8 G առ երկիրս հնչեն 9 H է Բեթղեեմ 10 K այ յերկնից 13 GH  
անամայրն Կ աստուծամայր աղախինն ջրհօր H կենդանի ինքնա-  
բուղին 14 G պահիւր Կ ըմպել Դաւթիթ, այսիքն Յովսէփ, որ զնայն  
պահէր 15 G սրբութեամբն 16 G ճառադայթաւետ 19 K արժաւ-  
նական G ընձայել 21 K զրազմամեծար արդանդ 23 G թէ տիրն և  
ստեղծն ի յաղախնէ 25 K զնախահայրն Ագամ և զառաջին մայրն  
Եւա կանդնել 29 H զերկին 31 H զքերովիմն 32 G Ե՞՞Մ H Ե՞՞Մ  
33 G տառօն 34 K եթէ մարդկեղէն ինչ։

55 սից ի մէնջ աշխատասիրեցաք յարմարել, զի զսոյն և  
աստուծագիր մատեանքն յառաջաձայնեալ քարոզեցին։  
Քանզի որոյ էութիւնն յարարչագործութեան անդ ի հրեշ-  
տակաց և ի մարդկային բնութեանս զբանաւորութիւնս  
արար, զնա ինքնագոյակն Հայր այսաւը իբրու յինքենէ  
40 ծնանի, զոր նոյն ինքն Հայր բերանով Դաւթայ խաւսեր-  
գեց, թէ Որդի իմ ես դու և ես այսաւը ծնայ զքեզ։  
Արդ՝ յորում աւուր ստեղծիչն աւուրց և բանից  
յանձն էառ ծնանիլ վերսախն, աղէ, եկ բեր դու ինձ  
ասել, թէ ո՞ր բան յառաջ մատուցեալ զայնպիսի աւուր  
45 բաւական լիցի պատմել գովութիւնս, Եւ եթէ բարձր  
զերկիրս քան զերկինսն իմասցուք, միթէ սնափառու-  
թեամբ ինչ պարծեցայ, աւն անդր. ո՞չ ապաքէն սպա-  
սաւորական հոգեացն եղեն երկինք բանակետդ, իսկ եր-  
կիրս բոլորիցն Աստուծոյ սեպհական քաղաք, զոր և  
50 մարդարէն իսկ յայտնապէս հնչէր, թէ Սա է Աստուծ  
մեր, ընդ որում ո՞չ համարեսցի այլ։ Յետ այսորիկ յերկրի  
երեկցաւ և ընդ մարդկան շըջեցաւ։  
Եւ զի բազմափառ քան զարևելս զկոյսն Մարիամ  
տեսաք, միթէ բա՞ն ինչ մեծամտութեամբ ի վեր քան  
55 զարժանն զանցուցաք, քաւ լիցի։ Զի յոյժ պատուական  
են արևելք վասն տուընթենային Հրոյն լնդ այն ծագե-  
լոյ, այլ ոչ իբրև զտեառնամայր աղախինն, յորում ա-  
մենեցունցն Աստուծ բնակեաց և արեգակնաբար ի նմա-  
նէ յաշխարհս ծագեաց։  
60 Եւ զի առաւել քան զքերովիմն զմուրն եդաք,

36 K աշխատասէր մատեանքն 37 H զհրեշտակաց և զմարդկան բնու-  
թիւնս արար 39 H յիշ այսաւը իբրու յինքենէ ծնանի, զոր նոյն ինքն  
Հայր 40 H Դաւթիթ 41 Սաղմ. Թ. 7. 43 G վերըստին յանձն էառ ծնանիլ  
Կ յանձն առ վերստին ծնանիլ G եկ դու բեր Կ եկ դու և բեր 45 H  
և պատմել 46 H զերկինս 48 H հոգւոցն 49 G բոլորից H սեփհական  
50 H միթիսկ յայտնապէս 51 Թուում է պահասաւոր. 53 H բազմափայլ 56  
G հրոյդ Կ լուսոյն 57 H տեառնամայրն աղախին Կ զտիրամայր աղա-  
խինն այ, 58 H բնակեցաւ 60 H եւ առաւել քան զքերովիմն

միթէ տհասութեամբ ինչ զաննմանս բարբառեցաք: Ո՞չ  
ահա յորմէ վեցթեանքն հիացեալ ի բացուստ սարսեն՝  
սա այսաւը ի մառը անդ որպէս ի հայրական ծոց բաղ-  
մի: Ուստի և մարգարէական շնորհացն բերանք՝ դիտե-  
լով զամենայն ձախը առեալ ձահողաբար՝ զնեբքինն ընդ  
փերինն կապակցէին, մանաւանդ զի ևս առաւել քան  
դդերիվերոյսն զստորինս պարագրեցին: Զի յորոյ երե-  
սաց երկինք որպէս մոմ հալին՝ նա այսաւը ի յայրին  
ամիսութեալ զսպի: Ընդ որ և առակաւոր բանն զարմա-  
ցեալ հիանայր, թէ Զի՞նչ երկիր իցէ յորում լոյսն ա-  
գանիցի: Զի ի հայրենի ծոցոյն որպէս հուր փայլակնա-  
ցաւ և ի խաւուն երկրին անվաս ծրարեցաւ, ըստ նո-  
րին կանխասայութեանն, թէ երկիր և ի նմանէ ելցէ  
հաց և ի նեբքոյ նորա որպէս [զ] հուր շրջեցաւ, զոր միւս  
մարգարէն յայտնապէս մեխնէ, թէ Հաներ զհաց յերկրէ,  
այսինքն զմարմին իւր ի Մարիամայ սրբոյ հուսէ:

Բարէ, անպատում երանութիւնըն զկուսական որո-  
վայնն փակեցին, զոր մարգարէութեան հոգին բերանովն  
Դաւթայ՝ լեառն սուրբ անուանեաց. Հիմունք նորա,  
ասէ, ի լեառն սուրբ նորա: Արդարեւ յայսմ լերին  
տնաւրինեալ անբաժանելի միաւորութեամբ երկու աշ-  
խարհըն հիմնաւորեցան՝ աստուածութիւնն և մարդկու-  
թիւնն: Վասն որոյ մի՛ ոք իշխեցէ զծնիցեալն ի սուրբ  
կուսէն սոսկ մարդ ասել, զի ինքն իսկ հիմունս արկ  
ի նմա բարձրեալն: Որպէս և հրեշտակն քարոզեաց, թէ  
Որ ի նմայն ծնեալ է՝ ի շոգւոյն սրբոյ է: Ասէ՝ Սիրէ Տէր

զմսուրսն եդաք 61 GH տըհասութեամբ 62 H ահա ուստի սերով-  
բեքն ի բացուստ սարսափէին հիացեալ 64 H շնորհացն բանք՝ գի-  
տելով 66 H զի առաւել 69 H զըսպի K զըսպիւր H հիացեալ զար-  
մանայր 70 Յովլ լ.լ. 19. 71 H իի որպէս 72 H ըստ նորուն 73 Յովլ.  
լ.լ. 5. 75 H մարգարէ 75 Սաղմ. ձի, 15. 77 G երանութւնքն H  
երանութիւնք K երանութեանն 78 G բերանով 79 Սաղմ. 29, 2.  
80 H իի ասէ 81 H աշխարհք 83 Սկսում և W Մի՛ ոք իշխեցէ  
զծնիցեալն ի սրբոյ կուսէն ևայլն: H իի սուրբ 84 H էարկ 84—93  
H կարկառուն և ևել ևել ևոր գրով կարկառակի վրայ գրուած 86 Մար.

զդրունս Սիոնի քան զամենայն յարկսն Յակովայ: Անըս-  
կիզբն Բանն Աստուած կրկին անգամ դրունս Սիոնի  
դիուսական մարմինն յաւրինեաց, զի յասելն հրեշտա-  
90 կին զողջոյնն՝ ընդ լսելիսն ի ներքս վազեաց Բանն և ին-  
նամանեայ ժամանակաւ ի մարմին զինքն թանձրացուցեալ  
ընդ որ ամենայն մահկանացուք ծնանին՝ ընդ նոյն և ան-  
մահացուցիչ Տէրն ոչ զդուեցաւ ելանել:

Ով մեծի խորհրդոյն, մտանէր և ելանէր և զդրունս  
95 կուսութեանն փակեալ պահէր: Արդ՝ որպիսի՝ աւրինա-  
կաւք զքեզ յառաջ բերեալ դովեսցուք սուրբ Աստուա-  
ծածին: Զի ահա եղեր՝ Դրախտ աստուածատունկ. Այգի  
վայելուչ. Մորենի անկիղելի. Լեառն սուրբ. Վէմ ջրա-  
ծին. Գաւալան ծաղկեալ. Սափոր ոսկի. Տուփ անուշա-  
400 չոս խնկոց. Տապանակ կենդանագիր կտակին. Զրչոր  
կենդանի ջրոյն. Բոյս բարի. Տեղի շափիղոյի. Քաղաք  
Աստուծոյ. Պարտէղ փակեալ. Աղբեւր կնքեալ. Բլուր  
կնդրի. Հովիտ շուշանի. Երկիր ծարաւուտ. Ամազ թե-  
թեւ. Անապատ անկոխ. Դուռն աղիսեալ. Տոմար անըն-  
405 թեռնի. Երկիր բանաւոր. Առաւտուտ խաղաղութեան:  
Արդ՝ զայս ամենայն մարգարէիցն պարք նախաձայնեցին:  
Խսկ մեք սկսցուք մեկնել կարգաւ զքսան և զըրս  
վկայութիւնս սրբոյն որ վասն քո:

[Ա]. Ուրսի լեր Մարիամ, Դրախտ աստուածա-  
տունկ. քանդի աստուածաբոյս մարմինն ի միջի քում  
որպէս զծառն կենաց արմատացեալ, զոր ընդ բոցեղէն

Ա, 20. Սաղմ. 22, 2. 88 G զրունս իւր H սիօնի 90 H զող-  
ջոյն G իննամանեա 91 H ի մարմին H [ստո]րացուցեալ, փակագծուածը  
կարկառամի վրայ նոր գրով 92 H մահացուք ծնանին նպ նոյն և ան-  
մահից տէրն G անմահուցիչ K անմահուցիչ 93 H եւլ[նել] յր-  
գնտէ] 94 G խորհրդոյն 96 H յառաջարերեալ 97—105 Հմետ. Աս-  
տուածածին շարականներ՝ Լեառն վիմածին եւայլն: 101 G շափիւզայ 102  
H աղբեր 103 G Ովիտ 104 H տումար G անընթեռնելի 109 G դրախտ  
շնչառոր և աստուածաբոյս յի աստուածատունկ քանդի 110 G ի մէջ

սրոյն զաւըութիւն բարձրելոյն անհպելի զքեզ տաղաւարեաց:

[Բ]. Ուրախ լեր Մարիամ, Այդի վայելուչ, յորում  
445 կամաւորութեամբ Հաւը ճշմարիտ որթն անկէր: Կա-  
պեսէ, ասէ, զէշ իւր զորթոյ և զյաւանակ իւր զգըն-  
դակէ որթոյ: Որթ զիստուած Բանն ասէ և գնդակ՝ ըզ-  
մարմին նորին, զոր և ինքն իսկ Միածինն ասէր, թէ  
ես եմ որթն ճշմարիտ:

[Գ]. Ուրախ լեր Մարիամ, Մորենի սխրալի, որ  
աստուածութեանն հրով վառեալ ոչ այրեցար:

[Դ]. Ուրախ լեր Մարիամ, Լեառն սուրբ, յորում  
ատեղծին Մովսէսի նորահրաշ տնաւրէնաւթեամբ առա-  
գաստեալ վարագուրեցաւ:

[Ե]. Ուրախ լեր Մարիամ, ապառաժ վէմ, ուստի  
յորդահօս վտակն խաղացեալ՝ զհամահրաւէր աւեախսն  
աշխարհի հնչէր. եթէ ոք ծարաւի իցէ եկեսցէ առ իս  
և արբցէ:

[Զ]. Ուրախ լեր Մարիամ, Գաւաղան ծաղկեալ,  
ուստի յարմատոյն Յեսսեայ բղիսեալ յարադալար ծա-  
ղիկն, որում յառաջացոյց յաւրինակ քահանայափետին  
եղի ցուլի, որ ի խորանի անդ առժամայն բողբոջեալ  
սաղարթէր:

[Է]. Ուրախ լեր Մարիամ, Սափոր ոսկի, որ ոչ  
455 զմահկանացու ընչընչուկն կրեցէր, այլ զանմահացուցիչ  
իերակուրն, զոր աստուածեղէն բերանն հրատարակեալ  
ասէ. Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին և մե-  
ռան, իսկ որ զմարմին իմ ուտէ՝ զմահ մի՛ տեսցէ յա-  
ւիտեան:

Նորա 112 G հրցն զաւըութիւն 113 G զնա տաղաւարեաց  
116 G զյովանակ մի՛ իւր 115—7 նմնդ. ԽԹ, 11. 117 H որթ զաս-  
տուածութիւնն և գնդակ զմարմին նորուն 119 Յովի. ԺԵ, 1. 123 G  
մովսէսի 124 G վերագուրեցաւ 127 Յովի. Ե, 37. 130 G Յեսսեա  
H ծաղիկ 132 G բողբոջէր 135 G ընչընչուկն H զինչընչուկն 136 H  
աստուածային G հրատարակեաց ասէ 137—9 Յովի. Ե, 49. Ը, 51.

440 [Ը]. Ուրախ լեր Մարիամ, Տուփ խնկահոտ իւղով  
լցեալ, ուստի նարդոսն մեծագնի բուրեալ և աստուա-  
ծային անուշահոտութեամբ զափեղերական տունս լցոյց:

[Թ]. Ուրախ լեր Մարիամ, Տապանակ շարժուն, յո-  
րում Բանն մշտնջենաւոր եղե կենդանազրեալ և նորո-  
445 գելով ևս զջարդեալսն փոխանակ մովսիսակերտ քա-  
րեղինացն չորս բանաւոր տախտակս զաստուածական աւ-  
րէնս դրոշմեաց:

[Ժ]. Ուրախ լեր Մարիամ, Տուն կենդանի ջրոյն,  
զորմէ մարգարէն ատէր, թէ Զուր ի տանէ Տեառն ելցէ  
և արբուսցէ զվիճակն հեթանոսաց, զոր և Միածինն  
ասաց, թէ Ես եմ ջուրն կենդանի:

[ՃԱ]. Ուրախ լեր Մարիամ, Բոյս բարի ըստ սրբոյն Յա-  
կովբայ, որ արձարձեալ ի մահին առ կենարաբն Քրիստոս  
զբանն տպաւորեցաւ, թէ ի շառաւիղէ ելեր որդեակ:

[ԺԲ]. Ուրախ լեր Մարիամ, Քաղաք Աստուծոյ ըստ  
երանելոյն Դաւթայ, որ յառաջն երգեց թէ Փառա-  
ւորեալն խաւսեցաւ վասն քո քաղաքդ Աստուծոյ:

[ԺԳ]. Ուրախ լեր Մարիամ, Տեղի շափիղայի, զի  
իբրև ակն պատուական աստուածախառն մարմինն գոյա-  
460 նայըր ի քեզ, որ և եղաւն իսկ որպէս զքար ընտիր  
ի հիմունս Սիովիի:

[ԺԴ]. Ուրախ լեր Մարիամ, ըստ ամենիմաստնոյն  
Սողովմնի Աղբեւը կնքեալ, ընդ որ ամենալցոյց գետն  
բղիսեալ՝ զկուսութեանն կնիք ոչ ելցէ:

[ԺԵ]. Ուրախ լեր Մարիամ, Պարտէզ փակեալ, որ զբազ-  
մարեր ձիթենին վերընձիւղեցէր, յաղագս որոյ Եսայիսա  
մարգարէացաւ, թէ Մնացեալն Յակովբայ նորատունկ  
սիրելի. ծաղկեսցէ իսրայէլ և լցցի երկիր պաղով նորա:

141 H մեծագին 142 H լցեալ 145 H ևս խորտակեալս G մու-  
սիսակերտ 149 = ԵՅ աղբիր ի տանե տեառն ելցէ եւ արբուսցէ զնորե վի-  
ճակաց. Յովի. Գ, 19. 151 Յովի. Դ, 10—11. 154 G ի շառաւիղէ.  
Նմնդ. ԽԹ, 9. 156—7 Յովի. ՀՅ, 3. 158 G շափիղայ 159 H մարմին  
160 H ի քէն H քար 163 H սաղովմնի. Երգ Դ, 12. 164 H զկու-  
սութեանդ 167 G ի էլ Հ յիսրայէլ 167—8 = Ժողովեալ որդիի

[ԺԶ]. Ուրախ լեռ Մարիամ, Հովիտ անվար, ուստի  
իրեւ շուշան վայրենի տէրունական մարմինն քուսաւ,  
զորմէ հոգելից մարդարէն ճառեաց, թէ Եղէց յաւղ իս-  
բայէլի և ծաղկեսցէ որպէս շուշան:

[ԺԵ]. Ուրախ լեռ Մարիամ, Բլուր խնկոյ, յոր Տէրն  
մտեալ անմահութեանն հոտովն զմահկանացու նիւթն  
համեմէր և ծնեալ յաշխարչ կենդանեաց և մեռելոց՝  
յաւիտենական ծխէր կեանս, զոր մարդարէութիւնն կան-  
խաւ գուշակէր, թէ Բուրեսցի հոտ նորա որպէս կնդրիի:

[ԺԸ]. Ուրախ լեռ Մարիամ, Երկիր ծարաւուտ, զո-  
րոյ զբնութիւն ոչ իշխեաց վթարել լուծումն արուի.  
ուստի մարդարէն դիրիսոս ի նմա քոյս յապառաժի  
երգեաց ասելով՝ Պատմեցաւ մեղ իրեւ զմանուկ, իրեւ  
զարմատ ի ծարաւուտ երկրի:

[ԺԹ]. Ուրախ լեռ Մարիամ, Ամպ թեթև ըստ յա-  
ռաջասացութեան մարդարէին, թէ Աշաւ ասիկ Տէր նըս-  
տեալ ի վերայ թեթև ամպոյ եկեսցէ յեղիպասոս: Եւ  
արդարեւ ամպ ցամաք, զի ոչ գիշացեալ ծանրացար ի  
ցանկութենէ առն:

[Ի]. Ուրախ լեռ Մարիամ, Անապատ անկոխ, յո-  
րում ոչ սոսկ ոք մարդարէ զիկայութեանն զործէ խորան,  
այլ զմեծն և զիստարեալն և զանձեռագործ խորանն,  
այսինքն զտիրական մարմինն առանց սերման առն ստեղծ  
ինքեան, զոր ի լուսազգեստ արդանդին հարեալ սաղմէր,  
զիսորան իւր:

Յակոբայ նորառութիւնի բովեսցեն. Մաղիսցէ հսրայէլ եւ լցին տիեզերք պտղով  
նորա», Եւ. Իէ, 6. 171 G իշի. = «Եւ եղիցի իրեւ զոյ հսրայէլի եւ ծաղ-  
բնութեսցէ». Ովս. ԺԴ, 6. 173 H Խնկոց 174 H Հոտով 177  
Բանալ 181 G ասէ 181—2 «Պատմեցար առաջ նորա իրեւ զմանուկ, իր-  
հանակութեանց աշխարչի 189 G ոչ սոսկ Հ իմ ոք Գ զիկայ-  
թեանն 191 H իմ առն 192 G իմ զոր Հ սաղմուկ 193 H հնչէր.

495 [ԻԱ]. Ուրախ լեռ Մարիամ, Դուռն աղխեալ, ընդ  
որ յրեշտակաց Տէրն մուտ և ել և զկուսական արգանդդ  
ոչ ելոյծ, յազագս որոյ Եղեկիէլ մարդարէացաւ, թէ  
Դուռնն որ յարեւելս կոյս է՝ ոչ ոք մտցէ ընդ նա և ելցէ,  
բայց Տէր Աստուած Խորայէլի մտցէ և ելցէ և դուռն

200 փակեալ կայցէ:

[ԻԲ]. Ուրախ լեռ Մարիամ, Տոմար անընթեռնլի,  
զի թէպէտ և գիտէր Յովսէփ զլպըռութիւն, զի ունէր այլ  
կին, և չէր անփոյթ ի մարմնոյ խառնութեանց, սակայն  
զնա ոչ իշխեաց ընթեռնուլ, որպէս մարդարէն ասաց,  
թէ Տայցի թուղթս այս յայը մի, որ գիտիցէ դպրութիւն  
և մի՛ կարասցէ ընթեռնուլ զնա:

[ԻԳ]. Ուրախ լեռ Մարիամ, Երկիր բանաւոր, զի  
աստուածընկալ որովայնդ անմատոյց լուսոյն ոչ միայն  
ամթու, այլ ճշմարտութեամբ եղեւ մայր, զոր և ոմն ի  
ամթու, ամթու ճշմարտութեամբ երկիրս երկին արար:

[ԻԴ]. Ուրախ լեռ Մարիամ, Առաւաւտ գեղեցիկ,  
յորում խաղաղութիւնն մեր զարմանալի յաւրինմամբ  
արար զերկոսինն մի, և ըստ սրբոյն Զաքարիայ՝ արեգակ-

210 նարար ի մեղ ծագեցաւ, փարատել զիստար մեղաց:

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ

պաքէն ելեր ըստ բանս. ոչ ապաքէն գեր ի վերոյ դատր  
էակացս. ոչ ապաքէն անցեր ըստ մարդկային միտս, զի  
220 Հոգին սուրբ էջ առ քեզ և զաւրութեամբ վերնոյն  
տաղաւարեցար: Եւ այս յաւէտ յիրաւի:

Զի զԱստուած ընկալար. զի զԱստուած յղացար. զի  
զԱստուած երկնեցեր. զի զԱստուած ծնար. զի զԱս-  
տուած անպարագըելի ի գիրկս բարձեալ կրեցեր. զի  
225 զԱստուած կաթնաբուծեցեր. զի զԱստուած սնուցեր.  
զի զԱստուած գգուեցեր. և որոյ երկինք աթոռ են և  
երկիրս պատուանդան ոտից նորա, և զբնաւ իսկութիւնն  
նորա և ոչ երկինք երկնից բաւական են տանել՝ դու  
զնա իբրև զողայ խանձարըապաս առնէիր:

230 Տինա և զի՞ կայ իմ ընդ այսպիսի մրցման կոռւե-  
լոյ, ընդէր վարանեալ տարակուսեն զիս երանութեանն  
ցոյցք. զի ահա երկինքն, որ ի Սինէական լերինն բոցա-  
զարդ հրով զսանդարամետացն հիմունս գղորդեալ սա-  
սանեցուցին, և ձեռքն, որ զերկինս և զերկիր արարին,  
235 այժմ ի մէջ անցեալ իբրև զպարմանի՝ բաժակ ի մատունս  
բերեալ՝ աղջկան միոյ մատուցանէ:

Արդ՝ այս գովութիւն ոչ այլ ինչ է, այլ քոյին իսկ

Ճել 219 Ա ընդ մարդկային 220 Ա էշ ի քեզ և զաւրութեամբ բարձ-  
րելցն 225 Գ կաթնաբոյծեցեր Ա կաթնարուծ արարեր Կ կաթնար-  
բուցեր. Հմել. «Մայր աստուծոյ Մարիամ, որ զասուած ծնար, որ զաս-  
ուած կարնարուծեցեր». «Եփր. Խոս» (ՀԲ): 226 Կ գգուեցեր, զի զած  
համրուցեցեր. Անձառ է խորհուրդս որ ի ձեռն ամենասուրբ կուսին  
երեցաւ ազգի մարդկան, անքննելի, անհասանելի, անիմանալի, ան-  
հետազաւտելի ելն. ելն: Բաց և բողնում ՑՀ-ի մնացած մասը: Նոյնն է  
անուն եւ Վ գգուեցեր. Անձառ է խորհուրդս որ ի ձեռն ամենա-  
սուրբ կուսին երեւեցաւ ազգի մարդկան ևայլն: 229 Ա արարեր.  
Հմել. եւ Արանաս՝ «Խանձարրապահել կարնարուծեցեր», ներբող ի ս Աս-  
կայ իմ և այլ ընդ այսպիսի մրցման կոռւել 232 Գ լերինն զհիմունս  
բացազարդ հրով զսանդարամետացն գղորդեալ 230—236 Այս հատուածը  
տես եւ Վենես, մի ձառըներում, Արանաս, կը 298, ծան. 7. 237 Գ յիշ

մարդարէութիւն, թէ Յայսմշետէ երանիցեն ինձ ամե-  
նայն ազգք: Արդ՝ աղաւեմք զքեզ, սուրբ Աստուածա-  
240 ծին, լեր բարեխաւս առ Որդիդ քո և Աստուած մեր  
միշտ փրկել ի փորձութենէ զ'ի ձեռն քո ի նա հաւատա-  
ցեալ ժողովուրդս և փառս մատուցանել ծնիցելոյդ ի  
քէն. այժմ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Իսկ 238 Ա մարդարէութիւնն. Ղուկ. Ա, 48. 240 Գ լեր մեզ ՑՀ առ  
որդիտ 241 Գ զի ի ձեռն քո 243 Ա այժմ և յաւիտեն».



## 2.

Ա=ԶԵՌ. № 102 ԳԷՌՊ. ՑՈՒց. ԹՈՒՂԹ, ԵՐԿԱԹ-ԱԳՅԵՐ,  
ՀԱՅՈԳ ՆԻ և ՆԼ Թ-ԻՆ [—ՓՈՒՀ 971 և 981 թ.]: ՏԵՂԵԿՈՒ-  
ԹԵՒՆՆԵՐ այս Զ-Ը Բ մասին տե՛ս իմ «ԱՆԱՆԿԻ ՇԵՐԱԿԱ-  
ԳԻ» ԱՐԱՐԱՄ 1896 և ՏԱՇ-Ք «ՄԱՆՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒ-  
ԹԵՒՆՔ, ՎԿԵՆ. 1895, Էջ 202 և յաւելուած: [Ա էջ 178 ա]

Հարցմունք յաղագսմարմնաւորութեանն Տեսոն զանազանի  
Վաշագանի Աղուանից իշխանի  
ընդ Պետրոսի Սիւնեաց Եպիսկոպոսի եւ Խմատասիրի:

[Ա.՝] Հ[արցումն]. Սահմանել զԱստուածութիւնն կա-  
րողութիւն իցէ՞ ումեք ընդ սահմանելիս:

—Պատասխ[անի]. Հարկաւոր է ինձ յայսմ վայրի-  
կրին առնուլ դէմս եւ զերկաբանչիւրսն ամբողջ պահէլ.  
5 վասն զի աստուածային գիրք ոչ միայն բանաւոր կեն-  
դանեաց ստեղծանեն դէմս, այլեւ այլոց կենդանեաց, որք  
զբանական զաւրութիւնն չափեցին զհիմունս ամենայն  
բանից: Տեղադրութեամբ փոխարերութեան ագարակին  
սահմանաց անհնար է սահմանել զաստուածութիւնն, զի  
թէ ինքն է տեղի ամենայնի, երկնի և երկրի եւ ամե-  
նայնի որ ի նմա են, զիարդ ոք ընդ սահմանելիսն չա-  
փիցէ՝ կողմանս դնելով նմա: Բայց համառաւա բանիւն,  
որ ցուցանողն կոչի, իբր սահմանելի է աստուածու-

Վերագրում Ա ումի Յշանակած լուսանցում հատուածի բուահամարը  
ձ՞՞Դ Ա էպիսկոպոսի և իմաստասիրի.

Տող 1 Ա սահմանեալ 5 Ա ածախն. 8-9 Հմել. «Սահման ասի  
ի փոխարերութենէ գիրից և ագարակային սահմանաց»: Սահմ.  
Պաւթի, Էջ 142. Վենեա. 10 Ա ամենայն տողամիջում ի 11 Ա  
ի նմայ 12 Հմել. «Սահման է բան համառաւա յայտնից գոյացու-

թիւնն, զի եւ Կիւրեղ Աղեկասնդրացի համառաւատ բառ-  
15 նիւ սահմանեաց զՀոգին սուրբ ընդդէմ ամբարշտին Մա-  
կեդովիսի, քանզի սեռ է եւ ի գոյացուցիչ զանազանու-  
թեանց | առեալ լինի սահմանաց. այլ ոչ ի տեղւոջէ, եւ  
ոչ ի ժամանակէ, եւ ոչ բնաւ ի շարժմանէ, քանզի ան-  
հնար է զշարժութեան տեսակսն առնուլ ի վերայ աս-  
20 տուածութեանն, որ յարարածոց կարգեցաւ:

[Բ.՝] Հարցումն. Ընդէ՛ր մարգարէն ասէ՝ Աստուած ի  
տեղոջ սրբութեան իւրում:

—Պատ. Ամենայն գիրք ի տեղոջ ասեն, եւ որք արժա-  
նի եղեն տեսանել զնմանութիւն փառաց նորա բազում  
25 աւրինակաւք այլայլեալս ի միմեանց զդէմս նորա գրե-  
ցին, այլ ոչ զոր ինչ էն. մարդոյ նմանութիւն տեսեալ  
յսկզբանն՝ առաջին գոյացեալ մարդոյն էր. Հիւրասիրին  
Սրբահմու՝ Հիւրոյ կերպարանաւք, ուստի զմարմնաւոր  
կերակուրսն եւ զլուացարարսն պատրաստէր. եւ Սահա-  
50 կու զրոշմեաց իսկ զմեծ խորհուրդն ոչխարով մեռե-  
լութեան նորա զտիեղերակեցոյց մահն: Եւ Յակովբայ  
ըմբշամարտիկ ձեւով. եւ աւրինադրին՝ հուր փառեալ  
ի մորենւոջն. եւ ժողովրդեանն՝ պատուանդանաւ ոտից  
ական պատուականի. եւ Յիսուայ՝ զիմաւք սպառաղի-  
55 նութեամբ զաւրավարի: Եւ դատաւորացն մասնաւոր  
նմանութեամբ ի միմեանց որոշեալ. եւ յետ այնորիկ յոր-  
ժամ ընդ հարսն խաւսեցաւ մարգարէաւք, եւ ընդ  
թագաւորսն ի բազում մասունս եւ աւրինակս: Այն  
